

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 135

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհուրդի
2016թ. փետրվարի 1-ին կայացած նիստի

- Նախագահությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր Ա.Լուրջյանի
- Քարտուղարությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի
գիտական քարտուղար Ա.Այվազյանի
- Մասնակցությամբ՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի
անդամների (ներկայության թերթիկը կցվում է):

1. ՀՀ ՊԿԱ մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի կատարման արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիֆուլարյան:

2. ՀՀ ՊԿԱ հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

3. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

4. ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրոսական ծրագրերի որակի գնահատման ցուցիչների ցանկի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի բաժնի պետ Ա.Գևորգյան:

5. Ընթացիկ հարց: ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

6. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայում աշխատակիցների

համար անգլերեն լեզու առարկայի դասընթացների կազմակերպման հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչ Ա.Այվազյան:

1. Լսեցին՝ ՀՀ ՊԿԱ մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի կատարման արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուլարյան::

Որոշեցին՝

ՀՀ ՊԿԱ մագիստրատուրայի 2015-2016 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ուսումնական պլանների և դասընթացների ծրագրերի կատարումը գնահատել բավարար:

2. Լսեցին՝ ՀՀ ՊԿԱ հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոռեկտոր Խ.Բեգիրջյան:

Որոշեցին՝

- Ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի ԻԳ-00.02 «Քաղաքական գործընթացներ և ինստիտուտներ» մասնագիտությամբ առաջին տարվա հեռակա ուսուցման ասպիրանտ Ստեփան Ստեփանյանի թեկնածուական ատենախոսության թեմա հաստատել «Պատերազմի կերպափոխումը և դրա ազդեցությունը արդի քաղաքական գործընթացների վրա. համեմատական վերլուծություն», գիտական ղեկավար՝ քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Մարիամ Մարգարյանին:
- Ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի հեռակա ուսուցման առաջին տարվա ասպիրանտ Նանե Զեյնալյանի՝ ԺԹ.00.01.- «Հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության «Անձնավորության արժեհամակարգի ձևավորման առանձնահատկությունները հոգեբանական պատերազմների պայմաններում» թեման երաշխավորել և ներկայացնել հաստատման: Գիտական ղեկավար առաջադրել հոգեբանական գիտությունների դոկտոր Վ.Հ. Մարգարյանին:

3. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու Գ.Հովհաննիսյան:

Որոշեցին՝

Հաստատել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հաստիքացուցակում ներառված պաշտոնների նկարագրերը:

4. Լսեցին՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրոսական ծրագրերի որակի գնահատման ցուցիչների ցանկի քննարկում և հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի բաժնի պետ Ա.Գևորգյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրոսական ծրագրերի որակի գնահատման ցուցիչների ցանկի քննարկումը և հաստատումը տեղափոխել հաջորդ գիտական խորհրդի նիստի քննարկմանը:

5. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» դոկտորական ատենախոսության թեմայի և գիտական խորհրդատուի հաստատում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան:

Որոշեցին՝

Աշոտ Սերյոժայի Հայրապետյանի ԺԲ 00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ դոկտորական ատենախոսության թեմա հաստատել «Հայաստանի Հանրապետության միգրացիոն քաղաքականությունը. Սահմանադրաիրավական կարգավորման տեսական և կիրառական հիմնախնդիրները» գիտական խորհրդատու՝ իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Աշոտ Հայկի Խաչատրյանին:

6. Լսեցին՝ Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի աշխատակիցների համար անգլերեն լեզու առարկայի դասընթացների կազմակերպման հարցի քննարկում:

Զեկուցող՝ ՀՀ պետական կառավարման սկադեմիայի ամբիոնի վարիչ Ա.Այվազյան:

Որոշեցին՝

ՀՀ պետական կառավարման սկադեմիայի աշխատակիցների համար կազմակերպել անգլերեն լեզու առարկայի դասընթացներ, դասախոսների վճարումը կատարել Ակադեմիայի արտաբյուջետային միջոցներից ժամավճարային համակարգով:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար
1 փետրվարի 2016թ.

Ա.Այվազյան

Կ.Տ.